ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Գ-28

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «30» 01 2019 թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռաֆիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը, ի դեմս տնօրեն Արարատ Աղասյանի (այսուհետ՝ Կազմակերպություն) որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), Ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված 85682.500 (ութսունհինգ հազար վեց հարյուր ութսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումար, ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ), իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնությունը, Ծրագրի առաջադրանքը, օրացուցային պլանը, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Կոմիտե,

2.4.6 ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում ՀՀ ԳԱԱ ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է **85682.500 (ութսունհինգ հազար վեց հարյուր ութսուներկու հազար հինգ հարյուր)** ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ:

4 Մոնիթորինգ

4.1 ՀՀ ԳԱԱ ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ-ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4.4 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և արվում են առաջարկություններ:

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 ՀՀ ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	**ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ**
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24	Ք. Երևան, Մ.Բաղրամյան 24գ
Հ/հ 900011024115	Հ/հ 900018005323
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Նախագահ՝ _____ *(ստորագրություն)*	Տնօրեն _____ *(ստորագրություն)*
ակադեմիկոս ՌԱՖԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	**ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ**
Կ.Տ.	Կ.Տ.
Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ *(ստորագրություն)*	Արարատ ԱՂԱՍՅԱՆ *(անուն ազգանուն)*

Հավելված 1
«30» 01 2019թ.
N 15-23 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը և Կազմակերպության տնօրեն Արարատ Աղասյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «30» 01 2019 թ. N 15-23 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ **85682.500 (ութսունհինգ հազար վեց հարյուր ութսուներկու հազար հինգ հարյուր)** ՀՀ դրամ գումարի չափով, ներառյալ՝ ԱԱՀ:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ ԳԱԱ	Կազմակերպություն
Նախագահ՝	Տնօրեն՝
_____ *(ստորագրություն)*	_____ *(ստորագրություն)*
ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ
	(անուն, ազգանուն)

Հավելված 2
«30» 01 2019թ.
N 7-13 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ
Ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրի
(ծրագրի անվանումը)

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջե:
2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

Հայ արվեստի՝ կերպարվեստի, երաժշտության, ճարտարապետության, թատրոնի, կինոյի, սփյուռքահայ արվեստի համալիր ուսումնասիրությունը, համադրական պատմության ստեղծումը:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):
   - Հայ արվեստի խոշորագույն դեմքերին, արվեստի առանձին հիմնախնդիրներին, դարագլուխ կազմող ժամանակաշրջաններին, հարևան ժողովուրդների հետ ունեցած առնչություններին նվիրված ուսումնասիրությունների ստեղծում:
   - Հայ արվեստի տարբեր ճյուղերի՝ կերպարվեստի, երաժշտության, ճարտարապետության, թատրոնի, կինոյի պատմության հանրամատչելի ակնարկների ստեղծում:
   - Հայ արվեստի տարբեր բնագավառների պատմության գիտական ուսումնասիրություն և դրա հիման վրա բազմահատորյակների ստեղծում:

4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

Երաժշտագիտության բնագավառում.

- Հայ երաժշտության ամբողջական պատմության շարադրումը՝ ակադեմիական բազմահատոր հրատարակությամբ:
- Միջնադարյան հայ երաժշտության ամբողջական (լիակատար) պատմության ստեղծում:
- Հայ երաժշտական միջնադարագիտությանը վերաբերող՝ դեռևս չուսումնասիրված երաժշտածիսական երգչական միջնադարյան ժողովածուների և հայ միջնադարյան մասնագիտացված երգարվեստին առնչվող պատմական ու տեսագեղագիտական մտքի հուշարձանների ուսումնասիրություն:
- Խազերի վերծանմանն ուղղված աշխատանքների իրականացում:
- 20-րդ դարի հայ երաժշտության պատմության ստեղծում:
- Հայ անվանի երաժիշտներին (կոմպոզիտորներին, կատարողներին), երաժշտական առաջատար կոլեկտիվներին (այդ թվում՝ Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնին) և ազգային երաժշտության բացառիկ կոթողներին նվիրված մենագրությունների շարքի ստեղծում:
- Համեմատական երաժշտագիտության զարգացում:
- Երաժշտական արևելագիտության զարգացում:

Ճարտարապետության տեսության և պատմության բնագավառում.

- Համակողմանի, օբյեկտիվ, պատմական, հնագիտական, ճարտարապետական տվյալների օգտագործումով և վերլուծությամբ ողջ քրիստոնեական ճարտարապետության զարգացման պատմության մեջ միջնադարյան հայկական եկեղեցական ճարտարապետության տեղի և դերի բնորոշումը:
- Հայ-պարսկական (աքեմենյան, սասանյան ժամանակաշրջանների, ուշ միջնադարի), հայ-վրացական, հայ-եվրոպական ճարտարապետական առնչությունների ուսումնասիրում:
- Քաղկեդոնիկ հայերի ճարտարապետական ժառանգության, աշխարհիկ ու պաշտամունքային ճարտարապետության փոխադարձ կապի, Հայաստանում մշակված եկեղեցական շենքերի հորինվածքների ծագումնաբանության, արվեստների սինթեզի խնդրի, հայկական վաղքրիստոնեական և Հայաստանի նախաքրիստոնեական ճարտարապետության կապի հիմնահարցի ուսումնասիրությունը:
- Հայաստանի երրորդ հանրապետության քաղաքաշինության, բնակելի, հասարակական և եկեղեցական շենքերի ճարտարապետության ուսումնասիրություն:

Թատերագիտության բնագավառում.

- Հայ ռեժիսուրայի պատմություն (1960-ականներից մինչև 20-րդ դարի վերջ):
- Հայ թատրոնի անվանի գործիչներին (դերասաններին, ռեժիսորներին) նվիրված մենագրությունների շարքի ստեղծում:
- Հայկական բալետի ուսումնասիրություն:
- Արդի բեմական արվեստի փոխակերպումները:
- Արդի թատերական պրոցեսների քննություն էսթետիկական և հասարակագիտական տեսակետից:

Կերպարվեստագիտության բնագավառում.

- Հայ կերպարվեստի ամբողջական պատմության շարադրումը՝ ակադեմիական բազմահատոր հրատարակությամբ:
- Հայ կերպարվեստի առանձին տեսակների լիակատար պատմության ստեղծում՝ մոնումենտալ և հաստոցային գեղանկարչության պատմություն, մոնումենտալ և հաստոցային քանդակագործության պատմություն, դեկորատիվ-կիրառական արվեստի պատմություն, գրքարվեստի պատմություն, բեմանկարչության և ազդագրի պատմություն, դիզայնի պատմություն:
- Հայ միջնադարյան արվեստի ֆիգուրատիվ սյուժեների և կերպարների պատկերագրություն և պատկերաբանություն (IV-XVIIդդ.), գլխավոր և երկրորդական սյուժեներ ու կերպարներ. սուրբ-գրական, պարականոն և հայրաբանական-մեկնողական աղբյուրները՝ յուրաքանչյուր սյուժեի տարբերակները, դրանց զարգացումը և ճյուղավորումը մանրանկարչության, որմնանկարչության մեջ և քանդակում, յուրաքանչյուր սյուժեի անմիջական զուգահեռները տարբեր երկրներում՝ սկսած վաղ քրիստոնեական արվեստից, մատենագիտության և սյուժեների ցանկ:
- Հայ միջնադարյան զարդամոտիվների պատկերաբանություն՝ կենդանական մոտիվներ. սուրբ-գրական և մեկնողական աղբյուրները, այդ մոտիվների իմաստային ու ֆորմալ փոխակերպումները մանրանկարչության մեջ, քանդակում և կիրառական արվեստում, բուսական մոտիվներ. այդ մոտիվների իմաստային ու ֆորմալ փոխակերպումները մանրանկարչության մեջ, քանդակում և կիրառական արվեստում, ճարտարապետական և երկրաչափական մոտիվներ. դրանց սուրբ-գրական և մեկնողական աղբյուրները, իմաստային և ֆորմալ փոխակերպումները մանրանկարչության մեջ, քանդակում և կիրառական արվեստում:
- Հայ անվանի արվեստագետներին (նկարիչներին, քանդակագործներին, գրաֆիկներին) և ազգային արվեստի բացառիկ կոթողներին նվիրված մենագրությունների շարքի ստեղծում:
- Հայ գեղարվեստական կյանքի պատմություն (XIX-XXդդ.):

Կինոգիտության բնագավառում.

- Հայկական կինոյի ամբողջական պատմության շարադրումը՝ ակադեմիական բազմահատոր հրատարակությամբ:

- Հայկական կինոյի անվանի գործիչներին նվիրված մենագրությունների շարքի ստեղծում:

Սփյուռքահայ արվեստի ուսումնասիրության բնագավառում.

- 20-րդ դարի սփյուռքահայ արվեստի ամբողջական (լիակատար) պատմության շարադրումը ակադեմիական բազմահատոր հրատարակությամբ:
- Սփյուռքահայ թատրոնի պատմության շարադրում:
- Սփյուռքահայ կերպարվեստի պատմության շարադրում:
- Սփյուռքահայ երաժշտության պատմության շարադրում:
- Սփյուռքահայ կինոյի պատմության շարադրում:
- Հայկական գաղթօջախների ճարտարապետության ուսումնասիրություն:
- Սփյուռքահայ արվեստի անվանի գործիչներին ու առանձին գաղթօջախներին նվիրված մենագրությունների մատենաշարերի ստեղծում՝ Ակնարկներ սփյուռքահայ կերպարվեստի պատմության, Ակնարկներ սփյուռքահայ երաժշտության պատմության, Ակնարկներ սփյուռքահայ թատրոնի պատմության նն:
- Սփյուռքահայ արվեստագետների ժառանգության՝ նամականու, հոդվածների, հուշերի և խոհագրությունների հրատարակում:

Տարեգրական աշխատանքների բնագավառում.

- Հրատարակության պատրաստել հայկական կինոյի տարեգրությունը
- Հրատարակության պատրաստել հայ երաժշտական կյանքի տարեգրությունը 1911-1920 թվականներին

Երաժշտական ֆոլկլորագիտության բնագավառում՝

- Դաշտային աշխատանքների իրականացում՝ գիտարշավների միջոցով հանրապետության մարզերում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում և արտերկրի հայկական գաղթօջախներում հայ ժողովրդական երգերի (գեղջկական, քաղաքային և աշուղական) և ավանդական նվագարանային երաժշտության նմուշների հավաքում:
- Գիտարշավների ընթացքում ձայնագրված երաժշտական նյութի համակողմանի ուսումնասիրություն և դասակարգում՝ ըստ ժանրի, ձևի, ձայնակարգային կառուցվածքի, տաղաչափության նն:
- Երաժշտական նմուշների անձնագրավորում և անցկացում համակարգչի մեջ:
- Նմուշների վերծանում և նոտագրում:
- Ժողովրդական երգերի ու նվագների ժողովածուների կազմում և հրատարակում:

Գիտական աշխատանքի արդյունքների ներկայացման ձևը՝ **Մենագրություններ, ալբոմներ, ժողովածուներ, գիտական հոդվածներ:**

Տնօրեն՝ _____ (Արարատ Աղասյան)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (Արարատ ԱՂԱՍՅԱՆ)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Հավելված 3
«30» 01 2019թ.
N 15-28 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ *

«Ենթակառուցվածքի պահպանման և զարգացման» ծրագրի

(ծրագրի անվանումը)

h/h	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները	կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազար դրամ)
1.	նյութերի հավաքում	հայ արվեստի ուսումնասիրություն		գիտական հոդվածներ, մենագրություններ, զեկուցումներ գիտաժողովներում	31.03.2019	17136.5
2.	նյութերի հավաքում	հայ արվեստի ուսումնասիրություն		գիտական հոդվածներ, մենագրություններ, զեկուցումներ գիտաժողովներում	30.06.2019	21420.6
3.	նյութերի հավաքում	հայ արվեստի ուսումնասիրություն		գիտական հոդվածներ, մենագրություններ, զեկուցումներ գիտաժողովներում	30.09.2019	21420.6
4.	նյութերի հավաքում	հայ արվեստի ուսումնասիրություն		գիտական հոդվածներ, մենագրություններ, զեկուցումներ գիտաժողովներում	30.12.2019	25704.8
Ընդամենը՝						**85682.5**

ՀՀ ԳԱԱ նախագահություն

Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան

(ստորագրություն)

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ

Տնօրեն՝ Ա.Աղասյան

(ստորագրություն)

Ծրագրի գիտական ղեկավար՝ (Արարատ ԱՂԱՍՅԱՆ)

(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

---

* *Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով*

Հավելված 4
«30» 01 2019 թ.
N 4-28 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ
«Ենթակառուցվածքի պահպանման և զարգացման» ծրագրի
(ծրագրի անվանումը)

հազար դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	66762.00	*13352.4*	*16690.5*	*16690.5*	*20028.6*
2	տնտեսական և այլ ծախսեր*	4640.1	*928.0*	*1160.0*	*1160.0*	*1392.1*
Ընդամենը (առանց ԱԱՀ)		*71402.1*	*14280.4*	*17850.5*	*17850.5*	*21420.7*
ԱԱՀ		*14280.4*	*2856.1*	*3570.1*	*3570.1*	*4284.1*
ԸՆԴԱՄԵՆԸ		85682.5	17136.5	21420.6	21420.6	25704.8

Կազմակերպության
Տնօրեն՝ _____ (Արարատ Աղասյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կազմակերպության
գլխավոր հաշվապահ՝ _____ (Մարգո Մարտիրոսյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Գ.Տ.

---

* *Բուհերում իրականացվող ծրագրերի համար նախատեսել ծրագրի ֆինանսավորման առնվազն 3%-ը, մյուս գիտական կազմակերպություններում իրականացվող ծրագրերի համար՝ առնվազն 5%-ը*

Հավելված 4.1
«30» 01 2019թ.
N 25-28 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ †

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	2369.1
	էլեկտրաէներգիայի ծառայություն	*685.4*
	գազի ծառայություն	*803.2*
	ջրամատակարարման ծառայություն	*100.0*
	կապի ծառայություն	*780.7*
	աղբահանություն	-
2	Գույք	-
3	Սարքեր և սարքավորումներ	-
4	Նյութեր	1700.0
5	Գործուղումներ	-
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	-
7	Արշավախմբեր	-
8	Հրատարակման ծախսեր	345.0
9	Ընդհանուր բնույթի այլ ծախսեր	225.8
Ընդամենը		**4640.1**

Կազմակերպության տնօրեն՝ _____ (Արարատ Աղասյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (Մարգո Մարտիրոսյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կ.Տ.

---

* *Բուհերում իրականացվող ծրագրերի համար չի լրացվում*

Հավելված 5
«30» 01 2019 թ.
N 25-28 պայմանագրի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ
«Ենթակառուցվածքի պահպանման և զարգացման» ծրագրի
(ծրագրի անվանումը)

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոն	Գիտական աստիճան	Աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը* (հազար դրամ)
1	Աղասյան Արարատ Վլադիմիրի	տնօրեն, բաժնի վարիչ	արվ.դ.	190.0
2	Ասատրյան Աննա Գրիգորի	տնօրենի տեղակալ, բաժնի վարիչ	արվ.դ.	180.0
3	Քամալյան Մարգարիտա Արսենի	գիտքարտուղար, ավագ գիտաշխատող	արվ.թ.	120.0
4	Գևորգյան Կարեն Վահանի	փոխտնօրեն տնտեսական հարցերով		179.0
5	Ասատրյան Գրիգոր Եգորի	տնօրենի խորհրդական, առաջատար գիտաշխ.	փիլ.գ.դ	72.8
6	Մարտիրոսյան Մարգո Սամվելի	գլխավոր հաշվապահ		167.0
7	Մանուկյան Կարինե Վլադիմիրի	կադրերի բաժնի տեսուչ		78.0
8	Քերթմենջյան Դավիթ Գրիգորի	առաջատար գիտաշխ.	ճ.գ.դ	72.8
9	Արզումանյան Լիլիթ Սնակի	առաջատար գիտաշխ.	բան. գ.դ.	72.8
10	Չթյան Անահիտ Գուրգենի	ավագ գիտաշխատող	արվ.թ.	72.8
11	Բեքարյան Անահիտ Արայի	ավագ գիտաշխատող	բ.գ.թ.	72.8
12	Համբարձումով Արսեն Լևոնի	ավագ գիտաշխատող	արվ.թ.	77.9
13	Հարությունյան Մարտին Վարդանի	ավագ գիտաշխատող	արվ.թ.	77.9
14	Կիրակոսյան Մերի Արայի	ավագ գիտաշխատող	արվ.թ.	77.9
15	Մկրտչյան Մանե Գառնիկի	ավագ գիտաշխատող	արվ.թ.	77.9
16	Գույլանովա Սվետլանա Անտոնի	ավագ գիտաշխատող		77.0
17	Ավագիմովա Ինեսա Նիկոլայի	գիտաշխատող		39.0
18	Մուրադյան Շուշանիկ Սեդրակի	գիտաշխատող		80.8
19	Ամիրջանյան Լիլիթ Լիպարիտի	կրտսեր գիտաշխատող		79.3
20	Մարդոյան Լուսինե Աշոտի	կրտսեր գիտաշխատող		38.9
21	Հասրաթյան Մուրադ Մարգարի	Բաժնի վարիչ, գլխավոր գիտաշխատող	ճ.գ.դ.	83.0
22	Խաչատուրյան Վանիկ Հակոբի	ավագ գիտաշխատող	ճ.գ.դ.	72.8
23	Գրիգորյան Վահագն Գրիգորի	ավագ գիտաշխատող	ճ.գ.թ.	72.8
24	Տեր-Մինասյան Անուշ Աշոտի	ավագ գիտաշխատող	ճ.գ.թ.	72.8
25	Ղույլյան Արտակ Բենիկի	ավագ գիտաշխատող	ճ.գ.թ.	72.8
26	Հասրաթյան Արեգ Մուրադի	ավագ գիտաշխատող	ճ.գ.թ.	39.0
27	Ջալալյան Ալեքսանդր Սերգեյի	գիտաշխատող		74.1
28	Հովսեփյան Հրանտ Աշոտի	գիտաշխատող	ճ.գ.թ.	77.9
29	Հովհաննիսյան Հենրիկ Վահանի	Բաժնի վարիչ, գլխավոր գիտաշխատող	արվ.դ.	83.0
30	Մարգունի Ռուզան Վաղինակի	ավագ գիտաշխատող	բ.գ.թ.	72.8
31	Սարգսյան Նազենիկ Գագիկի	առաջատար գիտաշխ.	արվ.դ.	72.8
32	Նալբանդյան Սառա Աշոտի	ավագ գիտաշխատող	արվ.թ.	39.0

* *Աշխատավարձը՝ ներառյալ եկամտային հարկը, չպետք է ցածր լինի, քան Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձը*

33	Խզմալյան Արա Էդիկի	ավագ գիտաշխատող	արվ.թ.	39.0
34	Ասլիբեկյան Անուշ Գագիկի	կրտսեր գիտաշխատող		39.0
35	Արևշատյան Աննա Սենի	առաջատար գիտաշխ.	արվ.դ.	75.0
36	Երնջակյան Լիլիթ Վարդգեսի	առաջատար գիտաշխ.	արվ.դ.	75.0
37	Ռուխկյան Մարգարիտ Աշոտի	առաջատար գիտաշխ.	արվ.դ.	75.0
38	Շախկուլյան Տաթևիկ Ռաֆայելի	ավագ գիտաշխատող	արվ.թ.	39.0
39	Ամիրաղյան Գայանե Աշոտի	ավագ գիտաշխատող	արվ.թ.	77.9
40	Մանուկյան Հովհաննես Կոնստանտինի	գիտաշխատող	արվ.թ.	77.9
41	Արտեմյան Լիլիթ Ռոբերտի	ավագ գիտաշխատող	արվ.թ.	77.9
42	Պետրոսյան Արուսյակ Մարկի	գիտաշխատող		75.0
43	Հակոբյան Լիլիթ Վահրամի	կրտսեր գիտաշխատող		45.0
44	Նավոյան Միեր Ռաֆիկի	բաժնի վարիչ, առաջատար գիտաշխ.	արվ.դ.	72.8
45	Պիկիչյան Հռիփսիմե Վահանի	ավագ գիտաշխատող	պ.գ.թ.	72.8
46	Թազակչյան Զավեն Պետրոսի	ավագ գիտաշխատող	արվ.թ.	75.0
47	Բաղդասարյան Անահիտ Հովհաննեսի	ավագ գիտաշխատող	արվ.թ.	46.3
48	Մեհրաբյան Ժասմենա Խաչատուրի	գիտաշխատող		76.0
49	Սարգսյան Մարգարիտ Իշխանի	գիտաշխատող		75.0
50	Տիգրանյան Մարյաննա Ալբերտի	ավագ գիտաշխատող	արվ.թ.	75.0
51	Հակոբյան Անի Սարգսի	կրտսեր գիտաշխատող		79.3
52	Ղազարյան Վիգեն Հովհաննեսի	Բաժնի վարիչ, գլխավոր գիտաշխատող	արվ.դ	72.8
53	Դրամբյան Իրինա Ռուբենի	գլխավոր գիտաշխատող	արվ.դ	75.0
54	Դոլուխանյան Լորետա Կարենի	առաջատար գիտաշխ.	ճ.գ.դ	75.0
55	Ավագյան Արթուր Վարդանի	ավագ գիտաշխատող	արվ.թ.	72.8
56	Ներսիսյան Ալիս Գրիգորի	ավագ գիտաշխատող	արվ.թ.	72.8
57	Թառայան Զեմֆիրա Ռուբենի	ավագ գիտաշխատող	արվ.թ.	72.8
58	Մանուկյան Սեյրանուշ Սոսի	ավագ գիտաշխատող	արվ.թ.	36.4
59	Սարյան Ռուզան Լազարի	ավագ գիտաշխատող	բ.գ.թ.	36.4
60	Ստեփանյան Մարինա Գեղամի	ավագ գիտաշխատող		74.1
61	Թաթիկյան Վահրամ Շահենի	գիտաշխատող		76.0
62	Դեմիրխանյան Արա Հրաչի	ավագ գիտաշխատող	պ.գ.թ.	75.0
63	Քոթանջյան Գարեգին Նիկոլայի	ավագ գիտաշխատող	արվ.թ.	72.8
64	Բուլության Վարդուհի Հարությունի	գիտաշխատող		78.0
65	Մեկբեկյան Գայանե Գուրգենի	գրադարանի վարիչ, արխիվարիուս		83.0
66	Բազինյան Աննա Ռոբերտի	ավագ գրադարանավար		78.0
67	Ոսկանյան Քնարիկ Հարությունի	լաբորանտ		37.7
68	Պապոյան Հասմիկ Հարությունի	Հավաքարար		77.0
69	Սիմովոնովա Սիրանուշ Հարությունի	ցերեկային պահակ		77.0
70	Բաբագուլյան Կարինե Սլավիկի	գիշերային պահակ		97.5
Ընդամենը				5344.2

Կազմակերպության տնօրեն՝ _____ (Արարատ ԱՂԱՍՅԱՆ)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Կազմակերպության անձնակազմի կառավարման բաժնի պետ՝ _____ (Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Հ.Տ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«23» 01 2019թ.

ՀՀ ԳԱԱ նախագահությունը, ի դեմս նախագահ Ռաֆիկ Մարտիրոսյանի և ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը, ի դեմս տնօրեն Արարատ Աղասյանի, հանդիսանալով « 29 » հունվարի 2018թ. կնքված գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին N Ե - 28 պայմանագրի Կողմեր, կազմեցին սույն արձանագրությունն այն մասին, որ Կողմերն ամբողջությամբ իրականացրել են պայմանագրով իրենց վրա դրված պարտավորությունները:

ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ	ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ *(կազմակերպության անվանումը)* Տնօրեն՝ _____ *(ստորագրություն)* ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ *(անուն, ազգանուն.)*	Նախագահ _____ *(ստորագրություն)* ՌԱՖԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Կ.Տ.	Կ.Տ.